«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18, հեռ. (+374 285) 3 31 31, էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

12.05.2021թ. N ՄՊ - 310

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
պարոն Մ. Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան

ՀՀ կենտրոնական բանկից ստացված թիվ 01 տեղեկացմամբ (թվագրված՝ 30.04.2021 թիվ 06.3.13.2-08/273 ԾՕՀ-21, ընկերությունում ստացվել է 10.05.2021թ.) ներկայացված փաստական հանգամանքների վերաբերյալ հայտնում ենք, որ 2020 թվականի հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ ԶՊՄԿ) խորհրդի նիստ, որի ընթացքում որոշում է ընդունվել 2020 թվականի նոյեմբերի 6-ին գումարել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: ԶՊՄԿ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը տեղի է ունեցել 2020 թվականի նոյեմբերի 6-ին:

Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին ԶՊՄԿ խորհրդի որոշման և բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին տեղեկատվությունը «Էական փաստերի և տեղեկությունների մասին» հաշվետվության ձևով արդեն իսկ հրապարակված է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում (www.zcmc.am):

Ինչ վերաբերում է «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության դեմ 29.12.2020թ. ներկայացված հայցերի հիման վրա հարուցված դատական վարույթների վերաբերյալ տեղեկատվության հրապարակմանը, ապա, դրա վերաբերյալ ընկերության դիրքորոշումը ներկայացվել է «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 08.04.2021թ թիվ ՄՊ-244 գրությամբ՝ ուղղված ՀՀ ԿԲ Նախագահին, զուգահեռաբար հրապարակելով «Էական փաստերի և տեղեկությունների մասին» հաշվետվություն՝ հիմնվելով «DataLex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության վրա:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերը նշված հայցադիմումներից մեկը (2020 թվականի նոյեմբերի 6-ի որոշման վիճարկման վերաբերյալ (գործ թիվ ՍԴ2/0301/02/20)) Ընկերությունում ստացվել է 2020 թվականի մայիսի 10-ին, իսկ մյուսը (թիվ ՍԴ2/0300/02/20) դեռևս չի ստացվել:

Առդիր՝ մեկ էջ:

Հարգանքով՝
Գլխավոր տնօրեն Մ. Պոլոսկով

Կատարող՝
իրավաբանական դեպարտամենտ
հեռ. 093 59-69-08

Թիվ 2 «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ
12 MAY 2021
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԵԼԻՑ No ՄՊ-10